4. --- Գտէ՛ք բառակերտումի ենթարկուած հետեւեալ բա-ռերուն արմատները եւ ցոյց տուէք հնչիւնափոխութիւնները : Բուրել, բնակ, բծիշկ, բուսակել, ձուլել, բուծա-լան, լուծում, ծուլանալ, ուսուցում, երեւութական, զոու-շանալ, գրուցել, փուլալ, ցուցադրութիւն, բուլամորթ .

տաժեի, գուժեի, կուսակցույիւն, յունական, պտուտակ. խուսափիլ, հանձայանալ, երեկոյեան, յուգում, բուրումնաւէտ, սրանալ:

Ը. ԴԱՍ

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԶԱՅՆԱՓՈՒՈՒԹԻՒՆ

Ձայնափոխութեան յատկացուած այս բոժինին մէջ տեանք ձայնաւորներու, բաղադրեալ ձայնաւորներու եւ երկրարբարաներու կանոնական ձայնափոխութիւնները: Այս ընդհանուր ձայնափոխութիւններէն զատ կան մասնակի փոփոխութիւններ, որոնց լայնօրէն չենք անդրադառնար, բայց անհրաժեշտ կը նկատենք հարեւանցի ակնարկ մը նետել այլ երեւոյթներուն վրայ:

Ա ձայնաւորը բառակերտումի առնն ընդհանրապէս իր դոյութիւնը սղահած է, բայց կարգ մը բառերու մէջ ե-ի, ը-ի եւ ուրիշ ձայնաւորներու վերածուած է. երբեմն ալ ամբողջովին սղուած է. օրինակ՝ արագընթաց-երագընթաց, Արաքս-Երասխ, ասել-ըսել, պատառել-պատռել, մոռանալ-մոռնալ, չորանալ-չորնալ, հաւանիլ-հանիլ, կոճակ-կոճկել:

Յ ձայնաւորը բառակերտումի առնն ձայնափոխութիւն չի կրեր, բայց ունինք երկու բառ, որոնց մէջ ի-ի վերածուած է. օրինակ՝ դեւ-դիւայիմ, դիւահար, արգելք-արգելական, բայց արգիլել. իսկ զոջալ բային մէջ ամբողջովին կորսուած է:

Ո ձայնաւորն ալ երբեմն կորսուած է. օրինակ՝ կոտոր-կոտրել, ոսկոր-ոսկրայիմ, ժողով-ժողվել:

Բաղաձայններու մէջ ալ երբեմն ձայնափոխութիւն տեղի ունեցած է, բայց ընդհանուր կանոնի չէ վերածուած, այլ մնացած է մասնակի երեւոյթի սահմանին մէջ. օրինակ՝

խուծ-դուծ, հաստաբետ, անբիծ-ամբիծ, ծիղ-ծիլ, մեղկ-մեղմ: Ձիրար փոխարինող այս վերերուն կու տանք լծորդ տնունը:

Կրկնաւոր բառերուն մէջ ալ ձայնափոխութիւն կայ, որ ընդհանրապէս կատարուած է բաղադրիչ երկրորդ մասին մէջ. օրինակ՝ դողդղալ, պռպռալ:

Բառասկիզբի հ բաղաձայնը բառակերտումի տալն Լը-րեմն կորսուած է. օրինակ՝ հեղեղ (հեղ-հեղ), պաշատ (սղչիատ), ծխան (ծխան), գլխատել (լլխատել):

Գրարարեան ընդ նախըրը բառակերտումի ընթացքին երբեմն սղուած է. օրինակ՝ ընկեր (ընդ-կեր), ընտանիք (ընդ-տանիք):

ՀՐԱՀԱՆԳ

1. — Յոյց տուէք հետեւեալ բառերուն մէջ կորսուած գրերը.

Գունատ, կոճկել, ոսկրայիմ, հեղեղ, ալել, շտկել, կիսատ, պատռել, սատկիլ, ընկեր, պոչատ, իղճալ, օրբան, քաղքեմի, ընտանիք, որկրամոլ, կոտրել, կրճատ, Աստուծոյ, արմտիք:

Կանաչ, ընել (աննել, անել), մոռնալ, տեսնել, մատնի, ելլել (ելանել, ելնել):

2. — Հնչիւնափոխութեան եւ կորուսման կանոններու վերաբերեալ ընդհ. հրահանգներ: Յոյց տուէք հնչիւնափոխութեան եւ կորուսման ենթարկուած գրերն ու երկրորդ բառները:

Բուսակեր, կիսատ, շնչել, գմոսել, գրաբար, գիրնալ, սրընթաց, սեւնալ, ջնջիմ, սրբել, քննել, ուղեցոյց, տնակ, ողջունել, ծփծփալ, հեծեծել, հեղեղ, փոփոխ, գրգիռ, հրքիռ, քոչոն, քափքփիլ, կապտարակ, լրագիր, դրացի:

Ուղղադրական եւ լեզուական սխալներու այս բաժինը անհրաժեշտ նկատեցինք ներմուծել այս «Ուղղադրական Ուղեցույց»-ին մէջ, որպէսզի աշակերտը զերծ մնայ անոնցմէ :

ԱԶԱՏ ԵՒ ՊԱՐԱՊ

Պայապ սծականը զործածուած մարդու համար, կը մատնանչէ մտային դատարկութիւն եւ հետեւտեբար չի կըրնար զործածուել անգբաղ վիճակի համար: Պէտք է գործածել ազատ ածականը: Հեղինական իմաստով կարելի է զործածել պարապը:

ԱԾԱԿԱՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Ածականը պէտք է դնել իր սրակած յառին անմիջական տալելը, այլապէս շիտթուրիւն կը ստեղծէ: Սխալ է ըսել՝ մնացեալ Զատկուան արձակուրդը. պէտք է ըսել Զատկուան մնացեալ արձակուրդը, որովհետեւ մնացեալը կը վերաբերի արձակուրդին եւ ո՛չ թէ Զատկուան:

Ուրիշ օրինակ մը . - մեծ հօրս ժառանգուրիւնը տարբեր իմաստ ունի, իսկ հօրս մեծ ժառանգուրիւնը՝ տարբեր:

ԱՂԻ ԵՒ Ո՛Ն ԻՅ ԱՂՈՏ

Կերակուրին մէջ աղին առատութիւնը լնորսւելու համար, սխալ է զործածել ազոտ ածականը: Հայ լեզուն նման ըստ չունի: Ունինք ազոտ՝ օտոյ, որ կը նշանակէ տարտամ: Պէտք է ըսել աղի: Հականիչ՝ անլի:

ԱՄԲՈՂՋ ԵՒ ԲՈՂՈՐ

Այս երկու անորոշ ածականներն ալ կու տան ամբողջութեան զտալուրը: Ամբողջ կը զործածենք՝ երբ ոչոք ածականին ընկերացող զոյակուան կրակի է. օրինակ՝ ամբողջ ծառը, ամբողջ պարտէզը: Բոլոր կը զործածենք երբ ասոր

Գ. Մ Ա Ս

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ

ԵՒ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Մեր արտասահմանի կեանքը առիթ տուած է ուղղադրական եւ լեզուական սխալներու վստուամին: Հայ կեանքը վարող մամուլն ու մտաւորականութիւնը շատ անգամ անտեղեկակ են հայ լեզուի ուղղադրութեան եւ շատ անգամ իրենց դրաւոր եւ ըրանացի արտայայտութեանց մէջ, կրմայ թէ սկամայ, թոյլ կու տան սխալներ: Այլ վրէպները կը վստուանցուին նաեւ հանրութեան: Աշակերտութիւնն ալ անմասն չի մնար այս չարիքէն:

Ուղղադրական սխալներու սրբադրութեան որպէս օժանդակ զործիքներ կ'ընդունինք ստուգաբանութիւնը եւ ձայնալիտութիւնը: Ամէն անգամ որ շիտթեցուցիչ ստորադասն ոտնդծուած են՝ զիմած ենք այս երկու ուղեցուցիչներուն:

Լեզուական (նաեւ կարելի է ըսել ոճաբանական) սխալներուն սրբադրութեան համար օլտադործած ենք տրամաբանութեան բերած նսրատը: Լեզուական սխալներէն ամենէն շատ տարածուածը բայերու խնդրառութիւնն է. օրինակ՝ ընթացիկ դարձած է լսել՝ ան ԻՆՄԻ կը սիրէ, փոխանակ ըսելու՝ ան ԶԻՍ կը սիրէ: Բայերու խնդրառութեան առանձնապէս անդրադարձած ենք:

ընկերացող զոյակսանը յոպնակի է՝ օրինակ՝ բոլոր ծառերը, բոլոր աշակերտները:

Ուրիշ օրինակներ՝ ամբողջ ուսուցչական կազմը ներկայ էր: Բոլոր ուսուցիչները ներկայ էին:

Ամբողջ բառը կրնայ յոպնակի լատի մը հետ զործածուի՝ ամբողջովին իմաստով: օրինակ՝ այդ հարցին համար ամբողջ ժամեր տրամադրեց:

ԱՅԼԱՍԵՐԻԼ

Այլասերիլ կը նշանակէ սերունդը՝ սուղութիւնը փոխել, օտարանայ. իսկ այլասեռիլը՝ սեռը փոխել:

ԱՅՆ ԵՒ ԱՆ

Այն ցուցական ածական է, իսկ անը՝ ունձնական զերանունն: Երբեմն այս երկուքին միջև շփոթ կը ստեղծուի: Պէտք է ի մտի ունենալ որ այնը կը զործածուի զոյականի մը հետ, իսկ անը՝ ո՛չ: օրինակ՝ այն մարդը մեռաւ՝ եւ ո՛չ թէ ան մարդը: Այն աշակերտը՝ որ կարգապահ է, կը սիրուի:

ԱՆՁՆԱԳԻՐ ԵՒ ԱՆՑԱԳԻՐ

Այս երկու բառերը երբեմն սխալ կը հնչուին: Անձնագիրը ինքնուրուի քաղցրն է, որ երբեմն անձնագրուդրալ կը կոչուի: Իսկ անցագիրը, այն արտօնագիրն է, որ օտար երկրէ մը ներս ազատ մուտք ունենալու իրաւունքը կուտայ:

ԱՆՈՅՇ ԵՒ ՔՆՔՈՒՇ

Անոյ ածականի պարագայ մը զոյութիւն ունի հայերէնի ուղղապրութեան մէջ: Այնքան զբաղեցուցած է հայերէնի ուղղապրութեամբ պարապրոշները, որ կարելի է ըսել թէ իսկապէս հարց մըն է: Ընթացիկ դարձած է անոյը անուշ

դրել: Զայնափոխութեան կանոններուն հիման վրայ փաստուած է երկրորդին անհեթեթութիւնը, սակայն ցարդ անոր կառչողներ անպակաս են:

Տեսնենք թէ ի՞նչ են ձայնափոխութեան տրամադրութիւնները այս հարցին նկատմամբ: Ոնդրին կը մօտենանք հակառակ կողմէն: Անոյ ածականը բառակերտումի ընթացքին կը դառնայ անուշեղէն, իսկ քննուշը՝ քննուքիւն:

Այս ուղեցոյցին՝ ձայնափոխութեան յատկացուած դրուիւն մէջ տեսանք, որ բառամէջի ուն կը կորսուի կամ անդիւր ընդ կը վերածուի, իսկ ոյն՝ ուն: Անոյը եթէ ունով կըսու ըլլար, պէտք է կորսնցնէր ունն եւ յատակերտուէր անշեղէն: Ընդհակառակը ուն կայ անուշեղէնին մէջ եւ այս ուն կ'ընդունինք որպէս անոյ բառին ոյ երկբարբառին ձայնափոխուած ձեւը:

Ասիկա թերեւս լուսադոյն առիթն է անդրադառնալու համար տարօրինակ երեւոյթի մը: Կարգ մը ուղղապրական սխալներ՝ տարիներոյ ուղիղ նկատուած են եւ այլպէս ալ զործածուած, այնպէս որ երբ այսօր կ'ուզենք այդ սխալները վերցնել եւ ուղիղները մատնանիւ ընել, բուն ուղիղները սխալ կը կարծուին: Անոյը պարագան անոնցմէ մէկն է: Ուրիշներու ալ պիտի անդրադառնանք հետագայ էջերուն մէջ:

ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ

Կանգրադառնանք երկու անորոյ ածականներու. արեւ եւ ամէն:

1.— Ոնէ անհատ մը: Պէտք է խուսափել կրկնութիւններէ: Ոնէ եւ մը անորոշութիւն յայտնող բառեր են եւ նոյն նշանակութիւնը ունին: Պէտք է զեղչել անոնցմէ մէկը: Ըսել կամ ոնէ անհատ եւ կամ՝ անհատ մը:

| | |
|----------------------|------------------|
| Սխալ | Ուղիղ |
| Սմէն անհատ մը | Սմէն անհատ |
| Մէկ ուրիշ պաշտօնի մը | Ուրիշ պաշտօնի մը |

2.- Ոեւէ եւ ամէն անորոշ տծականները միշտ ալ եզա-
կի զոյական կը պահանջեն. օրինակ՝ ոեւէ անհատ, ոեւէ
մարդ: Ամէն անհատ, ամէն մարդ:

3.- Ոեւէ եւ որեւէ: Այսօր կ'ընդունինք որ այս երկու
ձեւերն ալ զոյութեան իրաւունք ունին: Ոեւէ, որ յառաջ
եկած է զըստարեան ոեւիցէ (ս'վ որ ալ ըլլայ) բառէն, կը
գործածուի անձի համար. օրինակ՝ ոեւէ մարդ, ոեւէ ան-
հատ: Իսկ որեւէ կը գործածուի իրի եւ կենդանիի համար.
օրինակ՝ որեւէ տեղ, որեւէ կենդանի:

ԱՆՈՐՈՇ ՅՕԴ

Երբ գէտքի մը, առարկայի մը, երեւոյթի մը առաջին
անգամ ըլլալով կ'ահնարկուի, ձեզ լսողը կամ կարգացողը
անտեղեակ է ատոր, սէտք է զոյականին ընկերանայ մը
անորոշ յօղը, կամ նախադասութիւնը անորոշով տրուի. օրի-
նակ՝ պտայտի ելանիք եւ հասանիք պարտէզ ՄԸ: Կարելի է ըսել
հասանք պարտէզը, եթէ նախապէս ակնարկած էնք որտե-
տէղին եւ Լըբ մեկ մտիկ ընողը կամ կարգացողը տեղեակ է
մեր ակնարկած բանին: Անորոշ յօղի այս սուղին զործա-
ծութենէն ետք, երբ պիտի ակնարկենք վերոյիշեալ պարտէ-
զին, կընանք զործածել որսւիշ յօղը. օրինակ՝ պարտէզը
ծառեր ունէր:

Կընանք առաջին ակնարկութեան իսկ զոյական մը որս-
ւիշ յօղով տալ, եթէ իրեն կ'ընկերանայ յատկացուցիչ մը.
օրինակ՝ պտայտի ելանիք եւ հասանիք ՊՕՂՈՍԵՆՅ պարտէզը:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ Եւ ԳՐԱԲԱՐ

Այս երկու բառերը տծանցուած բառ կը նկատուին եւ
ս'չ թէ բարդ բառ: Կազմուած են աշխարհ եւ գիր(ք) այր-
մատներով եւ արար մասնիկներով: Կը նշանակեն աշխարհիկ
ձեւով (ռամիօրէն) եւ գիրքի ձեւով:

ԱՌԱՋ, ԱՌՋԵՒ Եւ ՅԱՌԱՋ

Առաջ կը գործածուի ժամանակ եւ կարգ ցոյց տալու
համար. օրինակ՝ Արտաւարդ արքայէն առաջ քաղաւորած
էր Արտաշէս Աշխարհակալ: Իրմէ առաջ ժամադրուրեան
ներկայ էի:

Առջեւ-ը կը գործածուի տեղի համար. օրինակ՝ սեղա-
նին առջեւ կեցած կը խօսէր:

Իսկ յառաջ կը գործածուի դէպի առաջ շարժումը ցոյց
տալու համար. օրինակ՝ օ՛ն, յառա՛ջ:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ – ԿԱԹՈՂԻԿԵ – ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ

Հայց. Եկեղեցին կը կուռուի Հայաստանեայց Առաքելա-
կան Սուրբ Եկեղեցի, իսկ անոր հաւատացեալները կամ ան-
դամները կը կուռուին Առաքելական: Սխալ է Լուսաւորչական
յորջուրջումը: Սխալ է Հայ Կաթոլիկ ձեւը. սէտք է ըսել Հայ
Կաթոլիկէ: Սխալ է նաեւ հայ բողոքական ձեւը. սէտք է
ըսել Հայ Աւետարանական:

ԱՍԿԵ – ՀՈՍԿԵ

Ասկէ կը գործածուի առարկայի եւ ժամանակի համար.
օրինակ՝ այս խնդրէն կ'ազելմ, ասկէ կ'ուզելմ. ասկէ քսան
տարի առաջ: Իսկ հոսկէ կը գործածուի տեղի համար. օրի-
նակ՝ հոսկէ (Պէյրաբէն) Հալէպ ՅՏԵ քլմ. է:

Սխալ ձեւեր են հաստեղ եւ հոստեղէն: Պէտք է ըսել հոս
և, հոսկէ:

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Բողոքատութեան երեք աստիճաններն են. հաստատա-
կան, բաղդատական եւ գերադասական կամ գերադրական.
օրինակ՝ լաւ, աւելի լաւ, ամենէն լաւ կամ լաւագոյն: Առա-
ջին երկուքին կազմութիւնը զժողովրդին չի ներկայացը-

ներ. սակայն զերադասականին պարագան որոշ շխտութիւն յառաջ բերած է: Կ'ուղենք զայն բառնալ:

1.— Բաղաձայնով սկսող որակական ածականի մը ստղև կարելի է ամենա ձեւը դնել. օրինակ՝ ամենամեծ մարդը. բայց պէտք է խուսափել ձայնաւորող սկսող որակական ածականի մը առջեւ նոյնը դնելէ. օրինակ՝ ամենաազնիւ. ամենազնւոյն: Պէտք է դործածել ամենէն ձեւը եւ ըսել ամենէն ազնիւ, ամենէն զնոյն:

2.— Ամենէն եւ գոյն ձեւերը զերադասականին նշաններն են, պէտք է խուսափել դանոնք միատեղ զործածելէ. օրինակ՝ ամենէն լաւագոյն: Պէտք է ըսել կամ ամենէն լաւ եւ կամ լաւագոյն:

3.— Էնքը զործածուած որպէս ամենէն լիմաստով՝ յանձնարարելի չէ թրքերէն ըլլալու սլատճառով:

4.— Ամենամեծ յաջողութիւն մըն էր:

Այս նախադասութեան մէջ անորոշ յօդին (մը) ներկայութիւնը անտեղի է: Գերադասական մը միշտ սրտել կամ զիմորոշ յօդ կ'ուղէ. օրինակ՝

Յակոբը լաւագոյն բարեկամս է:

Ասիկա տարուան լաւագոյն գիրքն է:

Գերադասականը բողոքով բաներու մէջէն ընտրուածը ցոյց կու տայ, ուրեմն պէտք է սրտել կամ զիմորոշ յօդ առնէ: Նոյնիսկ եթէ մէկէ աւելի են ընտրուածները, նորէն պէտք է որոշել կամ զիմորոշ յօդ ընկերանայ. օրինակ՝ Յակոբը լաւագոյն բարեկամներէս մէկն է:

ԲԱՅԱԿԱՆ ՍԻՄԱԼՆԵՐ

1.— Հայ աշակերտութեան մօտ, եւ Երրեմն ու զրադէտներու մօտ, տարածուած են հետեւեալ բայերուն սխալ ձեւերը — դտնալ, տեսնալ, իջնալ, ելլալ, մտնալ, յոխառնալ ըսելու գտնել, տեսնել, իջնել, ելլել եւ մտնել: Այս սխալները որեւէ ձեւով արդարանալի պատճառ չունին:

Երեւիլ եւ երեւնալ երկուքն ու ճիշդ են:

2.— Յաջորդական երկու բայերու զործածութեան պարագային՝ երկրորդ բայը միշտ աներեւոյթով պէտք է տալ. օրինակ՝ կ'ուղէր ԳԱԼ, բայց չկրցաւ: Կր մտածէր նամբորդել, կը սիրէր կարդալ:

ԶԳԻՅԼ՝ կը մտածէր նամբորդել:

ԲԱՅԵՐՈՒՆ ԺԵՏԱԿԱՆԸ

Հայ լեզուին մէջ ժխտական բայերու զործածութիւնը ընդհանրապէս եւ արարթարցի զործածութիւնը բայերու ժխտականին մէջ մասնաւորապէս, սխալ կը կիրարկուին զրադէտէն մինչեւ աշակերտը: Սակայն, իրականութեան մէջ, շատ պարզ եւ դիւրամբոնելի է ուսուցիչ եւ տրամարանսոյ մարդուն համար:

1.— Բայերուն ժխտականը կը կազմուի Զ նախադաս ժխտական մասնիկի յաւելումով. օրինակ՝ ուտել—չուտել, ելլալ—չելլալ, կերալ—չկերալ, քնացալ—չքնացալ:

2.— Միշտ բայն է որ կ'առնէ ժխտական մասնիկը եւ ո՛չ թէ իր վերադիրը. օրինակ՝ պիտի գամ—պիտի չգամ, եւ ո՛չ թէ չպիտի գամ (ընդհանրապէս սխալ մը): Թող երբայն—ըող չերթայ, եւ ո՛չ թէ չթող երթայ:

3.— Բացի սահմանական եղանակ ներկայէն եւ անցեալ անկատարէն, ինչպէս նաեւ հրամայական եղանակէն, միւս բոլոր եղանակներուն մէջ կը դնենք չ ժխտական մասնիկը:

4.— Սահմ. եղանակ ներկային եւ անցեալ անկատարին պարագային՝ կ'առնենք բայի մը անցեալ դերբայը կամ ընդունելութիւնը, օրինակ՝ իմած—իմել, քնացած—քնացել, եւ ուղեւը կը դնենք ֆակտիւս բայի սահմ. եղանակի ներկայի եւ անցեալ անկատարի խոնարհուած ձեւերը (եմ, ենք, էինք, եւլն.), ընկերապէս չ նախադաս ժխտական մասնիկին. օրինակ՝ չեմ իմած, չեն քնացել, չեմ լսել, չեն լսալ:

Ած վերջաւորութեամբ անցեալ դերբայը կը զործածենք

անցևալին մէջ տեղի ունեցած գործերու համար, իսկ ներկային համար՝ եր վերջաւորութեամբ անցեալ զերբայը. օրինակ՝ չեմ խմած, չեմ տեսած անցևալին մէջ. չեմ խմեր, չեմ բերեր -- ներկայիս :

5.— Բայերուն ժխտականին մէջ սպաթարդի գործածութեան միայն մէկ սրարայույ կայ: Սահմ. եղանակի, ներկայ ժամանակի եղակի Գ. Կէմքին մէջ, երբ թայը ձայնուրով սկսի, այն ատեն չի ժխտականին ի զիրը կր ջնջնէր. և տեղը սպաթարդ կը դնենք:

Հաստատական — կ'ուտեմ, կ'ուտես, կ'ուտէ:

Ժխտական — չեմ ուտեր, չես ուտեր, չի ուտեր -- Չ'ՈՒՏԵՐ:

6. — Հրամայականի մէջ ժխտականը կը կազմուի մի'սով եւ կր կոչուի արգելական. օրինակ՝ մի' գլխեր, մի' պառկի՛ք, մի' մոռնար:

7.— Ժխտական բայի մը ներկայութեան, տւելորդ է ուրիշ ժխտականի մը գործածութիւնը. օրինակ՝ ոչեմք չէ ըսել ո՛չ ոք չ'ուզեր, այլ ո՛չ ոք կ'ուզէ կամ մարդ չ'ուզեր:

Ունիմ, կամ եւ եմ բայերը ունին առանձնաբառութիւններ: Երեքն ալ սահմանականի ներկային եւ անցեալ անկատարին մէջ առանց կը-ի կը գործածուին եւ ժխտականի սրարայային միայն չ կ'առնեն. օրինակ՝ կամ-չկամ, կայ-չկայ (սխալ է զրեւ չիկայ կամ՝ չըկայ), ունիմ-չունիմ, ունի-չունի, ունի-չունի, եմ-չեմ, եմք-չեմք:

ՀՐԱՀԱՆԳ

8.— Ուղղալուութիւնը ստիպեցէ՛ք ժխտականի նտուեալ ձևերուն:

Չեկաւ, չգնաց, պիտի չգայ, չկայ, չունի, չ'ուզել, եթէ չուզէր, պիտի չուզէր, Թող չուզէր, չաւարտեց, չտեսաւ. պիտի չտեսնէ, ո՛չ ոք կարդաց, չի գրադիր, չի տեսներ, չեմ

լսեր, չի կրնար, չ'ալելի. չ'աղտատեր, Խող չներկէ, ելէ չըրաւ, մի' լսեր, չ'ըներ, չ'ըներ, Խող չընէր, ելէ չընէր:

9.— Տուէ՛ք ժխտականները հետեւեալ բայերուն:

Կը խօսի, կ'ատէ, պիտի մեկնի, Խող գայ, վառէ՛, լսած եմ. կը լսէ, կը կարծեմ, կը մարի, մարեցաւ, ունի, էի. պիտի ըլլամք, կ'երգէր, կ'երգէ, խօսէ՛, երգէ՛, կը գրագի. կր սպասէ, պիտի սպասէ, ելէ ըլլայ, Խող ներէ, մաքրեցէ՛ք:

ԲԱՅԵՐՈՒՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Բայերը՝ համաձայն իրենց գործողութեան եղանակին, կը բաժնուին եօթը խումբերու:

- 1.— Ներգործական - օրինակ՝ լսմել, գնել:
- 2.— Կրաւորական -- օրինակ՝ բռնուիլ, գարնուիլ:
- 3.— Զէրոք -- օրինակ՝ քննուիլ, նստիլ:
- 4.— Էական -- օրինակ՝ ըլլալ:
- 5.— Անցողական -- օրինակ՝ լսմցնել, կերցնել:
- 6.— Փոխադարձ -- օրինակ՝ կռուրտիլ, գործակցիլ:
- 7.— Անդրադարձ -- օրինակ՝ սրբուիլ, սանտրուիլ:

Վերոյիշեալ բայերը երկու ձևեր լրացուցիչ կամ խնդիր կ'առնեն -- սեռի խնդիր եւ բնութեան խնդիր: Ներգործական եւ անցողական բայերը ընդհանրապէս իրենց լրացուցիչը, որ սեռի խնդիր կը կոչուի, հայցական հարկով կ'առնեն. օրինակ՝ ես գիրք մը կ'ընցի: (Գիրքը հայցական հարկ սեռի խնդիր է):

Կարգ մը ներգործական բայեր իրենց սեռի խնդիրը հայցական հարկով առնելու տեղ՝ տրականով կ'առնեն: Կ'սկսենք անդրադատնալ այդ բայերուն:

Տրական հարկ սեռի խնդիր կ'ուզեն հետեւեալ ներգործական բայերը - ազդել, աղաչել, այցելել, առարկել, գարնել, խնայել, ծառայել, հանդուրժել, նայիլ, յաղթել. սպասել, տիրել, օգնել, եւայլն:

Վերոյիշեալ բայերէն՝ այցելել, գարնել եւ խնայել բա-

յերը որոշ նրբութիւններ ունին: Այցելել ըստ էրբ տեղ ցոյց տուող լատերու հետ դործածուի, հայցական հոլով ընտրութեան խնդիր կ'ուզէ. օրինակ՝ Պէյրութի քանգարանը այցելեցի. դարձեալ այցելեցի: Իսկ եթէ անձի հետ զործածուի, տրական հոլով սեռի խնդիր կ'ուզէ. օրինակ՝ բարեկամիս այցելեցի, հիւանդիս այցելեցի:

Ձարնել էրբ դործածուի սպաննել իմաստով, հայցական հոլով սեռի խնդիր կ'ուզէ. օրինակ՝ այսօր տասը քոչուս գարկի (այսինքն՝ որսացի, սպաննեցի). իսկ եթէ ծեծել, հարուածել իմաստով դործածուի, տրական հոլով սեռի խնդիր կ'ուզէ. օրինակ՝ ան պգտիկին գարկա:

Խնայել երկու իմաստ ունի եւ ըստ այնմ ալ երկու տեսակի խնդիր կ'ուզէ: Եթէ նշանակէ պահել, չգործածել, չտալ, կ'ուզէ հայց. հոլով սեռի խնդիր. օրինակ՝ դրամ խնայեց, իր գաւակը խնայեց. իսկ եթէ նշանակէ մեծ սիրտ ըլլալ եւ անյիշաչարութեամբ մտտենալ մէկուն ըրած յանդանքին, վատ արարելին, կ'ուզէ տրական հոլով սեռի խնդիր. օրինակ՝ կը խնայեմ պատիւիդ, կը խնայեմ տարիքիդ. այսինքն՝ յարգամբ կու տամ:

Բայեր՝ որոնք տալ, փոխանցել, ուղղել ցոյց կու տան, թէ՛ հայցական հոլով սեռի խնդիր կ'ուզեն եւ թէ՛ տրական հոլով ընտրութեան խնդիր. օրինակ՝ գիրքս քոչուս տալի: Գիրքս — հայց. հոլով սեռի խնդիր է, իսկ քոչուս — տրական հոլով ընտրութեան խնդիր:

ԲԱՑԱԿԱՅ ԵՒ ՊԱԿԱՍ

Մարդկային էակի մը տեղ մը ոչ-նեղիայութիւնը պէտք է ցոյց տալ բացակայ բառով, իսկ իրերու նոյն վիճակը, նուազ ընդունուած քանակի մը նուազումը՝ պակասով. օրինակ՝ աշակերտը բացակայ է: Շիշը պակաս է: Կարելի է պակաս բառը մարդոց համար ալ դործածել, եթէ մեր միտք ըստին տուեալ անհատին ցնդածութիւնը ցոյց տալ է:

ԲԱՑԱՐՁԱԿ ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

Բացարձակ թուական տեղանքի մը ընկերացող զոյսկան մը նախընտրելի է միշտ երկուսով տալ. օրինակ՝ Պօլսը տասը գաւաք քուր խմեց, եւ ո՛չ թէ տասը գաւաքներ:

Երբեմն կեանքի տեղութիւնը կամ ժամանակի երկարութիւնը շեշտելու համար յուշակոչով տալ. օրինակ՝ Քառասուն եՐԿԱՐ տարիներ՝ գրագէտը սպասարկած է հայ գրականութեան:

ԲԱՑՈԹԵԱՅ ԵՒ Ո՛Ն ԻՒ ԲԱՅՕԴԵԱՅ

Բառակերտումի կենթարկուած բառերուն ճշգրիտ ուղղակիութիւնը կարողութիւն է անոնց ճշգրիտ ստուգաբանութեան հետ: Բացօթեայ բառը կու զայ բաց եւ օք-էն, որ կը նշանակէ առանց տանիքի՝ բաց տեղ մը հանգչիլ, գիշերել: Բառը կերտուած է շատ հաւանաբար անցեալին մէջ կարուաններու րաց զաշտին մէջ զիշերելը ընտրուելու համար:

Եթէ գաս նէ

Նէ-ն այստեղ տեւորը է, որովհետեւ երէ-ին հետ կրկնութիւն է. երկրորդ՝ թրքերէն լատ մըն է: Պէտք է թել երէ գաս: Նէ-ի դործածութիւնը շատ ընդհանրացած է. պէտք է խուսափել անկէ:

ԵՏԻ, ԵՆԻ

Հայերէնի մէջ բառակիրքի ե գիրը կը հնչուի եւ. պէտք չունինք օտար բառերը, որոնք իրենց սկզբնաւորութեան ե հնչիւնը ունին՝ եւ-ով զրեւ. օրինակ՝ ԵՆԻ, ԵՆԻ, ԵՆԻԵ: Պէտք է զրեւ՝ ԵՏԻ, ԵՆԻ, ԵՄԻ:

Հայ լեզուին մէջ է՛ք վերջաւորութիւնով արմատական լատ չկայ: Եղածները լատակերտումով յառաջ եկած են. ուրինակ՝ ուքօրէք, հիւմարկէք, տնօրհնէք: Ունինք եք կամ էք վերջաւորութեամբ. օրինակ՝ ուքեք, կեղեք. հէգ. մէգ: Երբեք այս հիման վրայ եւս է՛ք թէ է՛ս:

Զուրկ կը գործածուի երբ անձ մը կամ իր մը՝ շունի փափաքելի յատկութիւն մը. ատկա իրեն չէ տրուած: Զուրկին մէջ կայ մարդուն կամքէն անկախ տարր մը. օրինակ՝ կոյրը տեսողութեան ԶՈՒՐԿ է, հետեւ է, իրեն չէ տրուած: Իսկ զերծը՝ կամաւոր հետաքուստ մըն է: Ենթական զիտնումով որ այսինչ բանը փափաքելի չէ, սպելով հետեւ կը մնայ անկէ. օրինակ՝

ԵՐԱԽԱՅ ԵՆ Ո՛Ն ՔԷ ԵՐԵԽԱՅ

Բառը կու գայ զրաբարէն. կը նշանակէ նոր ծնած, չմկրտուած անձ: Այս բառէն շինուած է երախայրիք բառը, որ կը նշանակէ աղքի պտուղ, առաջին բերք:

Գիտակից մարդը մոլուխլններէ ԶԵՐԾ կը մնայ:

ԸՆԴՈՒՆԵՑԱՅ ԵՆ Ո՛Ն ՔԷ ԸՆԴՈՒՆԵՑԻ

ԶԱՏԿՈՒԱՆ ԵՆ Ո՛Ն ՔԷ ԶԱՏԿՈՒԱՅ

Ունինք կարգ մը զոյականներ, որոնք երկի սեռականի մէջ աւան կ'առնեն եւ ո՛չ թէ ուայ. օրինակ՝

Ընդունիլ բայը կանոնաւոր բայ մըն է եւ ո՛չ թէ անկանոն. սատի անկանոն խոնարհման հետեւելու չէ: Այս պատճառով անցեալ կատարելին մէջ պէտք է ըլլայ ընդունեցայ, ընդունեցար, ընդունեցաւ, ինչպէս՝ խօսիլ — խօսեցայ, խօսեցար, խօսեցաւ:

Ատու — ատուան, ամառ(ն) — ամառուան, օր — օրուան, ամիս — ամսուան, տարի — տարուան, իրիկուն — իրիկուան:

ԸՆԹԵՆՆԵԼԻ ԵՆ Ո՛Ն ՔԷ ԸՆԹԵՆՆԵԼԻ

Սեռականի մէջ աւան վերջաւորութիւն սենցալ զոյականները՝ ընդհանրապէս ժամանակ ցոյց տուող բառեր են:

Բառը կազմուած է ընթեռնուլ աներեւոյթուլ եւ առաւել ի յետադաս մասնիկով: Զայնպիտութեան կանոններուն համաձայն բառամէջի ուն կամ ամբողջովին կը կորսուի եւ կամ անկէր ը-ի կը վերածուի: Այս պարագային բառը պէտք է ըլլայ ընթեռնի եւ ո՛չ թէ ընթեռնելի:

ԶԲԱՂԱԾ ԵՆ Ո՛Ն ՔԷ ԶԲԱՂՈՒԱԾ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ

Ահուաւոր շատ տարածուած սխալ մը — գրադուած: Բային աներեւոյթն է պարզիլ, որուն անցեալ զերբայն է ըզբաղած եւ գրադեր, ինչպէս ունինք խօսիլ. խօսած — խօսեր: Զգրադուած ըլլալու համար աներեւոյթը պէտք է ըլլար գրադուիլ:

Այս երկու բառերը նրբութիւն մը ունին, զոր շատեր կը շփոթեն: Ընկերայինը կապուած է ընդհանուր ընկերութեան հետ, իսկ ընկերականը՝ կը վերաբերի աւելի անհատին: Մարդը միտամասնի ընկերային եւ ընկերական էսկ կընայ ըլլալ: Անհատը, կ'ապրի մարդկային հաւաքովանութեան մը ծոցին մէջ, որ ընկերութիւնն է եւ հետեւաբար ընկերային

էակ մըն է: Եթէ այդ ընկերութեան ծոցին մէջ ներամտիւի կեանք մը ապրելու տեղ, կ'ապրի ծառայութեան կեանք մը, այլասէր եւ ընկերասէր է, ու փնտոսուած իր շքեղատէն, կը դառնայ ընկերական մարդ:

Ամէն մարդ, ամխտիր, ընկերային էակ մըն է, սակայն. ո՛չ ընկերական:

Ընկերական բառը կը գործածուի նաեւ կուսակցական յնկերներու հանդիպումներու համար:

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Թատրերգութիւն բարդածանց բառին արմատն է քատր, որուն վրայ աւելցած է երգ երկրորդ արմատ մը եւ ութիւն մասնիկը: Սխալ է գրել քատրբաքիւն: Կը գրենք քատրբական, որովհետեւ կազմուած է քատր արմատին դրաբարեան սեռականին — քատր — եւ ակամ յետադաս մասնիկին միացումով:

Սխալ է նաեւ եղերգ բառը, պէտք է ըլլայ եղերերգ (ողբերգ). կազմուած է եղեռն եւ երգ արմատներու միացումով:

ԽԱՐՈՒԿԱՀԱՆԴԵՍ

Ընթացիկ դարձած է գրել խարՈՅկահանդէս՝ փոխանակ խարՈՒկահանդէսի: Նորէն կը գրենք ստուգարանութեան եւ ձայնափոխութեան: Բառը կազմուած է խարոյկ եւ հանդէս արմատներով: Բառամէջի ոյ Լրկարարուր բառակերտուածի ատեն ու-ի կը վերածուի. օրինակ՝ բոյր — բուրի, քայն — քանաւորել, խարոյկ — խարուկահանդէս:

Թերեւս տարկողներ ըլլան՝ թէ այս կանոնը յոյսորձակ չէ եւ բացառութիւններ կան: Կ'ընդունինք թէ իրաւացի է այս զխտողութիւնը, եւ արդէն այդ բացառութիւնները յիշած ենք ձայնափոխութեան կանոններուն մէջ: Մեր ջանքը պէտք է ըլլայ այդ բացառութիւններուն թիւը նուազեցը-

նել եւ ո՛չ թէ աւելցնել, այլասէր հայ լեզուին մէջ անխտու-նութիւն կրնայ տիրիլ:

ԽՈՇՈՐ ԵՒ ՄԵՄ

Այս երկու բառերն ալ ցոյց կու տան անընտան, սրտասովոր երեւոյթ մը: Խոշոր յատուկ է ծաւալի, խակ մեծը՝ որակի: Օրինակ. արտասովոր ծաւալ ունեցող Վրբ մը՝ խաշոր Վրբ է: Կ'ըսենք խոշոր Վրբ, հասկնալով սովորականէն աւելի ծաւալ ունեցող Վրբ: Երբ ըսենք մեծ Վրբ, կը հասկնանք որսւ տրժէք ներկայացնող Վրբ (տնձ):

ԽՈՍՍԱՆԱԼ ԵՒ Ո՛Ն ԲԷ ԽՕՍՍԱՆԱԼ

Կը գրենք ստուգարանութեան: Բառին արմատն է խսստ եւ ո՛ն թէ խօսք: Խոստ կը նշանակէ ուխտ: Իմաստով կը մօտենայ խօսք տալ-ուն հետ եւ այլ հիման վրայ այ շր-փոթ կը ստեղծուի:

ԽՈՐԱԶՆԻՆ ԵՒ Ո՛Ն ԲԷ ԽՈՐԱԶՆԻՆ

Ահաւասիկ շատ ընդհանրացած սխալ մը — խորազնին — որ յամառած է տեւապէս իր զստութիւնը սրահել: Նորէն ուրիշ գրմանք ձայնափոխութեան կանոններուն: Առենք գննել, գննող, գննալիւն բառերը: Այս երեքին ալ արմատը նոյնն է — գնն: Ինչո՞ւ կ'ստուած է ի ձայնաւորը. սրտասխանը կու տայ ձայնափոխութիւնը. բառամէջի ի Վրբ, բառակերտուածի ատեն կը սղուի կամ անգիր ը-ի կը վերածուի: Վերոյիշեալ բառերուն մէջ սղուիք երկու ու, որովհետեւ ի ձայնաւորը սղուած է:

Կը գրենք սղուի կանոնի մը: Բառակերտուածի ընթացքին, երբ արմատը կը սղուի տնձ բառին վերջը եւ իրմէ վերջ մասնիկ չ'ունենար, իր արմատական ձեւը կը սրահել. օրինակ՝ սիրտ — քաջասիրտ: Եթէ ընդունինք որ գննիմ-

արմատն է, փորձենք զայն յառուկերտուժի ենթարկել, ի՞նչ կ'ըլլայ արդիւնքը — գննել, ինչ որ ծիծաղելի է: Սակայն եթէ ընդունինք զնին ձեւը, բառակերտելով կը ստանանք զննել:

Այս հիման վրայ սէտք է զրել խորագնին և ո՛չ թէ խորագննին:

ԾԱՆԵԼ ԵՆ Ո՛Ն ՔԷ ԾԱՆԼԵԼ

Կաղճուած է ծալ արմատով և ել բարակերտ մասնիկով: Աւելորդ է երկորդ լ բաղաձայնը:

Ունինք բառեր, որոնց մէջ զիր մը կը հնչուի որպէս զոյդ, բայց չենք կրկնէր. օրինակ՝ ամէն, յիսուս, հրամայ, փետել, փտիլ:

ԾՆՐԱԳԻԻՐ ԵՆ Ո՛Ն ՔԷ ԾՆԿԱԶՈՒՅ

Չոք բառը թրքերէն է և հետեւաբար թոյլատրելի է զայն հայերէնի մէջ զործածել: Պէտք է լսել ծնրադիր — ծուռի զբաժ կամ ծուռիկ ևկած:

ԿՏՐԵԼ — ԿՈՏՐԵԼ — ԿՈՏՈՐԵԼ

Կտրելը կը նշանակէ իրէ մը կամ մարմինէ մը մաս մը, բաժին մը հանել. իսկ կտրեիլը փշրանքի կամ մասնիկներու բաժանման զողովարը կու տայ. օրինակ՝

Կտրձանը կտրեցի, ապակին կտրեցի:

Ունինք նաև կտտրել բառը, որ կը նշանակէ բազմաթիւ իրերու, կենդանիներու, մարդերու միաժամանակ սնչապոստը:

ԿՈՒ-Ի ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Գ. լծորդութեան պատկանող ևրք բայեր կան, որոնք սահմանական եղանակ ներկայի և անցեալ անկատարի մէջ,

կըլ տեղ կա կ'առնեն: Ինչպէս կը-ն, նոյնպէս կու-ն պէտք է բայէն անջատել՝ զրելու ատեն. օրինակ՝ կու գամ, կու լամ, կու տամ: Զանոնք թէև անջատ կը զրենք, սակայն միասին կը հնչուին, կարծէք թէ միացած ըլլային:

Կարլ մը աշակերտներ սրտառոց ձեւով կը զրեն վերոյիշեալ բայերուն սահմանական եղանակի ներկան և անցեալ անկատարը կ'ուզամ, կ'ուլամ, կարծէք թէ աներեւոյթը ուզամ, ուլամ և ուտամ ըլլար: Աններելի սխալ մըն է, որմէ պէտք է ձերբարկուել:

ՀՈԳԻ ԵՆ ՀԱՏ

Հոգին վերապահուած է մարդուն, իսկ հատը՝ կենդանիներուն և անչունչ իրերուն. օրինակ՝ Չորս հոգի հրաւիրեց: Տասը հատ կերաւ:

ՃԱԿՏԵՆ ԵՆ ՃԱԿԱՏԵՆ

Հայերէնի մէջ բազմանիշ բառեր կան: Բոռի մը զանազան իմաստներուն միջև չիտթէ փրկուելու համար, երբմի հնչիւնափոխութեան օրէնքներուն կարելի է դիմել: Ճակատ կը նշանակէ թէ՛ մարդուն զլիսուն յառաջամտը և թէ՛ սրտերովի յառաջամտը: Մարդկային ցակատը ընորոշելու համար սէտք է բառը հոլովել հետեւեալ ձեւով.— ցակտին, ցակտին, ցակտով (ա-ը յասլակով), իսկ ռազմացակատը հետեւեալ ձեւով:

Ճակատին, ցակատին, ցակատով (ա-ը սլահելով):

Նոյնն է սլարական գուլս բառին.— կը նշանակէ մարդկային մարմնին սնդամներէն մէկը, նաև զլրջի մը զլիսուսը բաժանումները: Երբ ակնարկութիւնը կը վերադարձի մարդուն գլխուն, պէտք է ու-ն կրճատել, իսկ եթէ գիրքի մը բաժանումին՝ պէտք է ու-ն սլահել: օրինակ՝

Գլխէն հարուած մը ստացաւ:

Գիրքը տասը գուլիտ կը բաղկանայ:

Ունինք նաև շարժ թափն ստորագրոն: Շարժքուան կը նշանակէ Շարժ օրուան, իսկ շարժքուան — եօթը օրուան:

Ունինք նաև մարմին բառը, որ երբ կը նշանակէ մարդկային ֆիզիքը, հոլովման ստեն կը կրճատենք ի վերջ. օրինակ՝ մարմնի, մարմնէ, մարմնով. իսկ եթէ նշանակէ յունճնախումբ՝ պէտք է ինն պահել. օրինակ՝ կնդրոնական Մարմինէն հեռագիր մը ստացայ:

| | |
|-------------|----------------|
| Մի՛ ԳՐԵՔ | ԱՅԼ՝ ԳՐԵՑԵ՛Գ |
| Բացականչել | բոցալանչել |
| Ծայրահեղ | ծայրայեղ |
| հեղափոխ | խելափ |
| Կատակութիւն | կատակ |
| Մարդիկներ | մարդեր, մարդիկ |
| Յետագայ | հետադա |
| Պէտքութիւն | պէտք |
| Տղաքներ | տղաք, տղաներ |
| Տուններնիս | մեր տունը |
| Փառայեղ | փառահեղ |

ՅԱՌԱՋԻԿԱՅ եւ ո՛չ քէ ԳԱԼ

Գալ—ը թրքերէն է և հետեւաբար դոյնութեան իրատունը չունի դրական լեզուէն ներս: Պէտք է ըսել յառաջիկայ, երբ պիտի բնորոշուի դալիք պէտք մը. օրինակ՝ յառաջիկայ շաքաթ՝ տարի:

ՅԱՌԱՔԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Որ բառը որպէ՛ս դերանուն գործածուելով՝ կը փոխարինէ դոյնական մը: Այս դոյնականը կը կոչուի յարաբերեալ, իսկ ար բառին նախադասութիւնը՝ յարաբերական նախադասութիւն: Յարաբերական նախադասութիւնը երկրորդական նախադասութիւն մըն է, որ երկու ձեւով կը գործածուի:

1.— Կրնայ վըխաւոր նախադասութեան մը մէջ մտնել և միջանկեալ նախադասութիւն ըլլալ. օրինակ՝

Այն անձը՝ որ իր առողջութեան հոգ չի տանիր, կը սուսօծէ:

2.— Կամ վըխաւոր նախադասութենէ մը ետք դրուել. օրինակ՝

Սա գնեցի այն գիրքը, որ անուրդի դրուած էր:

Որ յարաբերական դերանունը քիւով կը համաձայնի իր յարաբերեալին հետ, իսկ հոլովով՝ իր նախադասութեան բային խնդրառութեան հետ:

Կու տանք օրինակներ.

Այս մարդը՝ որ կը քալէ, հայրս է:

Այն աշակերտը՝ զոր ծեծեցիր, եղբայրս է:

Այն անձը՝ որուն նամակը յանձնեցիր, բարեկամս է:

Այն մարդը՝ որմէ պտուղ գնեցիր, հօրեղբայրս է:

Որ յարաբերական դերանունը կրնայ իր քիւով չհամաձայնի իր յարաբերեալին հետ, սակայն չի՛ կրնար հոլովով չհամաձայնի յարաբերական նախադասութեան բային հետ. օրինակ կրնանք ըսել՝ գիրքերը՝ որ հոն դրուած էին, փոխանակ ըսելու՝ որոնք հոն դրուած էին. սակայն չենք կրնար ըսել՝ գիրքերը՝ որ հոն դրած էին. պէտք է ըսել գիրքերը՝ զորս հոն դրած էին:

Մենք կը նախընտրենք որ յարաբերական դերանունը թիւով ալ համաձայնի իր յարաբերեալին հետ և ըսենք — գիրքերը՝ ՈՐՈՆԻ հոն դրուած էին:

Նախընտրելի է յարաբերական դերանունը և յարաբերեալը իրարու ջով դնել, այլապէս կրնայ շփոթ ստեղծուիլ:

Աշակերտները յաճախ կը գործածեն որք ձեւը, գար—ին տեղ, ինչ որ սխալ է: Յոգնակի հայրականին մէջ գործածել զարս: Զարս և, գարս ձեւերուն մէջ գ վերի ներկայութիւնը կրնայ ոմտնց համար զրոյստեան թուիլ, յայտ պէտք չէ մեկ

խորտակեցին: Ուրիշ զերանուններու մէջ ալ կը գործածենք. ես-գիտ, աշխ-գայն, սենեք-գանոմք, իրենք-գիրեմք:

Որ յարաբերական շերանունին գործխտանն է ՈՐՈՎ. և. ո՛չ թէ որմով:

Պէտք է շփոթել ուր-ը ոյ-ին հետ: Ուր կը գործածուի միայն տեղ ընտրուելու համար. մինչ որ-ը կրնայ ընտրուել տեղ, սնձ, իր, կենդանի, և ալլն:

ՅՈՒԵԼԵԱՆ

Սխալ բառակերտումի ենթարկուած ուրիշ լատ մըն ալ այս է: Կը զիմենք նորէն մեր ոչտրակիմ' ստուգաբանութեան: Բառամէջի եա երկրարբառ բառակերտումի ստեղծար կը կորսնցնէ. օրինակ՝ մատեան — մատեանդարան: Այս հիմամբ սէտք է ըսել յորելեան — յորելեանկան, և ո՛չ թէ յորելեանկան կամ յորելեանական: Նոյնն է պարսկան ակոյեան բառին: Պէտք է ըսել ախոյեանկան խաղեր և ո՛չ թէ ախոյեանկան խաղեր:

ՅՈՒԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹԻԻՆ

- 1. — Ունինք յոյնակերտ երկու մասնիկներ . եր և և եր:
- 2. — Եղակի ուղղականին վրայ կ'աւելցնենք եր մասնիկը, և թէ բառը միավանկ է. օրինակ՝ Տուն-տուններ, ժամ-ժամներ, դաս-դասեր:

Եր յոյնակերտ մասնիկ կ'առնեն նաեւ մէկուկէս մասնիկնոց բառերը, և թէ սուղ վանկը բառին վերջն է. օրինակ՝ վաղը-վաղքեր, եղբ-եղքեր, տեղը-տեղքեր, կայր-կայքեր: Ներ կ'առնեն՝ և թէ սուղ վանկը բառին սկիզբն է. օրինակ՝ դիւիչ-գրիչներ, տակ-տակներ, կտակ-կտակներ, տնակ-տնակներ:

3. — Գրաբարի մէջ կարգ մը միավանկ բառեր իրենց վերջաւորութեան արմատականն մը սունն, որ մեր ներկայ աշխարհարարի եզակի ուղղականին մէջ չի յայտնուիր: Երբ

այդ բառերը յոյնակիի կը վերածենք, զեղջուածն մտաւր կը կենդանանայ. օրինակ՝

Լեռ(ն)-լեռներ, քոռ(ն)-քոռներ, եղ(ն)-եղներ:

Բացառութիւն կը կարգեն կարգ մը բառեր. օրինակ՝

Անձ(ն)-անձեր, կայք(ն)-կայքեր, մաս(ն)-մասեր, սեր-մը(ն)-սերմեր:

4. — Բաղմավանկ բարդ բառ մը, որուն բաղադրիչ երկրորդ մասը միավանկ բառ մըն է, կը ստանայ եր. երբ միավանկ բառին բուն իմաստը պահուած է. օրինակ՝

Քարեր-տապանաքարեր, կէտ-միջակէտեր, հայր-նախահայրեր:

5. — Երբ բաղադրիչ երկրորդ մասը կը կորսնցնէ իւր բուն իմաստը և ջոյց կու տայ ունեցող, կատարող, գործող, այն ստեղծներ կ'առնէ յոյնակիի մէջ. օրինակ՝

Վարժ-մահկավարժներ, առակախօս-առակախօսներ, ձեռագիր-ձեռագիրներ:

6. — Միավանկ բառ մը երբ նախադաս մասնիկներ առած լլլայ, յոյնակիի մէջ ներ կ'առնէ. օրինակ՝

Մակդիր-մակդիրներ, մակբայ-մակբայներ, բաղաձայն-բաղաձայններ:

7. — Բաղմավանկ բառ մը յոյնակիի մէջ ներ կ'առնէ. օրինակ՝

Թշնամի-թշնամիներ, քարեկամ-քարեկամներ:

8. — Անձայն յ-ով վերջաւորուող բառերը, յոյնակիի մէջ յ-ն կը կորսնցնեն. օրինակ՝

Սպայ-սպաներ, շղթայ-շղթաներ, տպածոյ-տպածոներ:

9. — Ունինք բաղմաթիւ բառեր, որոնք պարսկի մէջ յոյնակերտ ք մասնիկը առած են, բայց այդ բառերը մենք եղակի նկատելով, կ'աւելցնենք եր կամ ներ յոյնակերտ մասնիկները. օրինակ՝

Աղօթք-աղօթքներ, վերք-վերքեր, անէծք-անէծքներ:

Կարգ մը բառեր սլահած են իրենց պարսերան յոյնակի ձևեր. օրինակ՝

Մարդ-մարդիկ, կին-կանայք (նաև կիներ), տիկին-տիկ-
նայք (նաև տիկիններ), պարոմ-պարոնայք (նաև պարոն-
ներ), որդի-որդիք (նաև որդիներ), եղբայր-եղբայրք (նաև
եղբայրներ) :

Գրաբարեան ձեւերը կը գործածուին քաղաքայտրական
խօսակցութիւններու եւ գրութիւններու մէջ :

10.— Ք գրաբարեան մասնիկի յաւելումով յայնակի կը
կազմուին ցի եւ ունի վերջածանց մասնիկով բառերը . օրե-
նակ՝

Պէտրուքցի-պէտրուքցիք, մշեցի-մշեցիք . Արշակունի-
Արշակունիք :

ԹԵԼԱԳՐԱՆՔՆԵՐ

Ուշադիր պէտք է ըլլալ որ բայը իր թիւով համաձայնի
եմքակային թիւին հետ : Եղակի ենթակայ մը, կողակի բայ
կ'ուզէ, իսկ յոյնակի ենթակայ մը, յոյնակի բայ մը :

Հաւաքական անուն մը կողակի է եւ հետեւաբար կ'ուզէ
կողակի բայ մը . օրինակ՝

Ժողովուրդը կ'երգէ . բանակը կը քալէ . Ե . դասալսանը
պտայտի գնաց :

Մարդիկներ եւ տղաքներ ձեւերը սխալ են . պէտք է ըլ-
լան մարդիկ եւ տղաք :

Տուէ՛ք յոյնակին հետեւեալ բառերուն .

Պտուղ, աստղ, գլուխ, մկրատ, քարակոփ, քաղաձայն .
փայտահատ, մարտանաւ, քաժնետոմս, պաք, տետր, լոյս .
մուկ, հնչիւն, առաւօտ, որսորդ, չարամիտ, խոտակիտ, փա-
մակատար, կիւն, պարոն :

ՇՆՈՐՀԻԻ ԵՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Շնորհիւ կը դործածենք կրթ տուեալ գործի մը սրբիւն-
քը փափաքելի կամ լուս է, ըստ ենթակային . իսկ պատճա-
ռով՝ եթէ հակառակն է . օրինակ՝

Պրն . Յովսէփին շնորհիւ կրցայ ուսումս շարունակել :
Անոր պատճառով սնանկացայ :

ՈՒՂԻ ԵՒ ՈՒՂԻՊ

Այս երկու սրմատ բառերը բառակերտումի տունն ըլլա-
թութիւն կը ստեղծեն : Պէտք է դիմել ձայնափոխութեան օ-
րէնքներուն : Բառակերտումի ատեն սեղի-ին ի գլուխ ե-ի կը
վերածուի, մինչ սեղի-ին ի-ն կը կորսուի . օրինակ՝

Ուղի — սեղեկից, ուղիղ — սեղանկիւն :

Ձայնափոխութեան օրէնքներէն զատ, կարելի է ոգտու-
գործել նաեւ բառերուն ստուգարանութիւնը : Ուղին փախայ
կը նշանակէ, իսկ ուղիղ՝ շիտակ : Այս հիման վրայ՝ ուղե-
կորոյս, որ կը նշանակէ ճամբան կորսնցուցած, կը գրուի
մէկ դ-ով, իսկ ուղղագրութիւն, որ կը նշանակէ ուղիւզ գը-
րել, երկու դ-ով : Կարգ մը օրինակներ՝

Ուղեցոյց, ուղեկորոյս, ուղեմուտք, ուղեկից :
Ուղղակի, ուղղամիտ, ուղղանկիւն, ուղղել :

ՊԶՏԻԿ ԱՂԶՆԱԿ

Աւելորդաբանութիւն է եւ հետեւաբար՝ սխալ, նոյն նա-
խագասութեան մէջ գործածել երկու բառ, որոնք նոյն ի-
մաստը ունին . օրինակ՝

Աղջնակ կամ պզտիկ աղջիկ, բայց ո՛չ պզտիկ աղջնակ :
Ուրիշ օրինակ՝ գրքոյկ կամ պզտիկ գիրք, բայց ո՛չ՝
պզտիկ գրքոյկ :

ՊԵՏՔ Ե ԽՕՍԷՐ

Պէտք է հարկադրական ձեւին ընկերայող բայ մը տնջեալ
ընդունելութիւն չէ՞ որ պէտք է եր-ով գրուի : Պէտք է խօսելը
նախագասութեան ուղղեանական ձեւը կողմ է պէտք է որ խօ-
սելը, որուն մէջէն որ շարժապարտ յաստուած է :

Սլայմնեյլ-ը Լկած է գրաբարեան սպանանեյլ յայտն, կոր-
որնցնեյլով Լրկու Թ-Լրուն միջնե Կտնուող ա-ը: Սպաննեյլը ա-
ռանձին չէ որ այդ փոփոխութիւնը կրած է, կան ուրիշ բա-
յեր ալ: օրինակ՝ մտանալը եղած է մոռնալ, մտանեյլը՝
մտնել, տեսանելը՝ տեսնել: Բայեր՝ որոնք իրենց արժատին
և վերջուորութեան միջնե մասնիկներ սենին, կր կոչուին
յաւելուածով բայեր:

Սպանութիւն գոյականին պարագան տարբեր է: Այս
գոյականը կազմուած է սպան արժատով և ուրիւն յետա-
գաս մասնիկով: Ունինք ուրիշ օրինակներ ալ՝ տես(անել) -
տեսուիլուն, տեսողութիւն, և այլն:

ՎԱՃԱՌԵԼ ԵՆ ՎՃԱՐԵԼ

Երկու շփոթուող բառեր: Դիւրացնելու համար բանք
որ խանութպանը կը վաճառէ (կը ծախէ), իսկ յաճախորդը
իր զինած ապրանքին փոխարէքը կը վճարէ (կու տայ): Ու-
րիշ բառեր — վաճառք, վաճառակցան, վաճառատուն: վնա-
ւորդ, վճարուժ, վճարելի:

ՎԱՍՆՁԻ, ՈՐՊԷՍՁԻ

Գրաբարի մէջ վասնզի, որպէսզի, քանզի, դէսյի, բացյի,
նոյնիսկ բառերը տնջատարար կը գրուէին, այսպէս՝ որպէս
զի, դէպ ի և այլն, բայց աշխարհաբարի մէջ մենք գտնենք
միացած կը գրենք:

Անջատ կը գրենք ի դիմաց (կողմէն) և ի վեր բառերը:

ՎԵՐԱԳՆԱՆԱԼ

Աւելորդարանութենէ պէտք է խուսափել: Վերադառնա-
լը բուսարար է մարդու մը կամ իրի մը դարձը բնորոշելու
համար. աւելորդ է ետ-ը զենել վերադառնալուն առջեւ:

Վերջ բառը գոյական է: Կը գործածուի սեռական հոլո-
վի հետ. օրինակ՝ կեանքին վերջը, գիրքին վերջը, բառին
վերջը:

Ետք բառը յետադրութիւն է: Կը գործածուի յայտառ-
կան հոլովի, նաեւ ժամանակ շոյց տուող բառերու հետ.
օրինակ՝ դասէն ետք, ճաշէն ետք, երկու ժամ ետք:

Յետոյ բառը մակրայ է: Կը գործածուի յայր հետ. օրի-
նակ՝ ճաշեց՝ յետոյ մեկնեցաւ: Դասերը սորվեցաւ՝ յետոյ
քնացաւ: Յետոյ-ն կրնայ փոխարինուիլ նաեւ. ապա մակրա-
յով. օրինակ՝ ճաշեց՝ ապա մեկնեցաւ:

ՅԵՐԵԿ

Կը գրենք մեր գլխաւոր գէնքին՝ ստուգաբանութեան:
Յերեկ բառը կազմուած է ց + երեկոյ-ով և կը նշանակէ
մինչեւ Լրեկոյ: Զունինք որեկ ձեւով արժատ մը, որ ց-ին
միացուածով իմաստ առնէ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Այս մասին մ'չլ կու տանք կարգ մը ծանօթութիւններ, որոնք առաւելաբար ստուցելն կը վերաբերին: Այդտա է վանոնք իր աշակերտներուն վրասնցելու, եթէ անոնց միտքը լուստիան հասուն կը նկատէ տրուած բացատրութիւնները բարձրելու չափ:

ՕՏԱՐ ԲԱՌ

Ուղղաւորական ղեկներու մ'չլ օխա, նոքա, պամբա եւ այլ նման բառերու առջեւ կը վնեն օտարամուտ անտիանը եւ կ'ըսեն հետեւորար, վանոնք առանց յ-ի սէտք է գրել: Կ'ուղենք մասնակի յաւելում մը ընել: Արդեօք օտարամուտ չենք քահանայ, շուկայ, շղթայ բառերը, զորս յ-ով կը գրենք: Զանոնք առած ենք ասորերէն լեզուէն: Ինչո՞ւ այս խորութիւնը: Պատասխանը այս է: Հայ լեզուն՝ այն ինչ որ ներածած է օտար լեզուներէն, մ'ինչեւ Ռուբինեան իշխանութեան անկումը, որսէս հասարակ անուն, դուրս ձգելով տեղանուններն ու անձնանունները, վերաւորարտ սուրբ-գրային, մարած է վանոնք եւ այսօր մենք այլ բառերը հայ լեզուի բառապանակին անհրաժեշտ մասերը կը նկատենք, առանց անգրագատելու՝ որ անոնք օտարամուտ են: Օրինակ՝ քահանայ, սատանայ բառերը յ-ով կը գրենք վերջաւորութեան, ըսելով որ հայերէնի մ'չլ ա-ով վերջապող թառ չունինք:

Այն բոլոր օտար բառերը, որոնք հայերէնի մ'չլ մուտ գործած են Ռուբինեաններու անկումէն ետք, տակաւին բաւարար առիթ չեն ունեցած մարտուելու հայ լեզուին մ'չլ եւ հետեւաբար այդ բառերն են՝ որ առանց յ-ի կը գրենք, երբ ա-ով վերջանան. օրինակ՝ ամիրա, աղա, փաշա, նոքա: Իսկ վաղով օտար անգրագատելու եւ անձնանուններուն, բոլորն ալ մեր մատենադրութեան սկիզբէն ի վեր անխոր

առանց յ-ի կը գրենք՝ երբ ա-ով կը վերջանան. օրինակ՝ եղիա, Երեմիա, Սամարիա, Ասիա, Երուսաղ, եւ այլն:

Ա-ՈՎ ՎԵՐՋԱՅՈՂ ԲԱՌԵՐ

Գրաբարի մ'չլ ունինք այլ սլարապաներ ալ, զորս կ'աւելնք հաս յիշատակել. —

Սա, սորա, սմա, սոքա, գոսա:

Պա, դորա, դմա, գդա, դոքա, գդոսա:

Նա, նորա, նմա, զնա, նոքա, զնոսա:

Ասանց վրայ կարելի է աւելցնել համարեա քէ բառը որ ցրտարէն կու գայ: Գրաբարի մ'չլ կը նշանակէ կարծէ՛ բէ, գրէ՛ բէ, այսինքն համարել յայն հրամայականը (համարեա՛ բէ, գրեա՛ բէ), բայց սխալաբար մ'չլ անցած է գրեքէ իմաստով:

ԿԸ ՍԿՍԻ, ԿԸ ՍՊԱՍԷ

Կարգ մը մարդիկ՝ այն յայտերը, որոնք շատիւն ղեկերով կը սկսին — գ, ս, շ, սահմանական ներկայ եւ անցեալ անկատարի մ'չլ կ'առաջարկեն գրել կ'սկսի. կ'ստիպէ, կ'սպասուէ, այն պատճառաբանութեամբ թէ այլ շատիւն ղեկերը իրենց առջեւ ունին շլրուող՝ բայց հնչուող ը ձայնաւորներու քանի որ կը-ն ձայնաւորով սկսող բառին տողեւ ը ձայնաւորը կը կորսնցնէ, ինչո՞ւ գրել կը սկսի. կը սպասուէ եւ ս'չ թէ կ'սկսի, կ'սպասուէ:

Այս հարցին կարելի է պատասխանել սղաւինելով ցրտարարին: Գրաբարի մը գ, ս, շ, բաղաձայններէն առաջ զլուտուող ը ձայնաւորը անպայման ընդունուած է, եւ այլ հիմամբ ու ըսուած է ի սպաս, ի սպաս, ի գրասան եւ ո'չ թէ յսպաս, յսպաս, յգրասան: Նոյն պատճառաբանութեամբ ալ մենք կը գրենք կը շտապեմ, կը գրանում, կը սկսի, կը սպասուէ, առանց սղաւթարցի: Պէտք է գիտնալ սակայն որ ցրտեք միտցած կը հնչենք:

Օտար բառերն ու յատուկ անունները հայ այբուբենով արտաստեղծելու դործողութիւնը կը կոչուի տառադարձութիւն: Մեր պատմութեան մէջ այս դործողութիւնը երկու ձևով տեղի ունեցած է:

1. — Տառադարձութեան հին կանոն, որ փորձած է օտար բառերը արտաստեղծել իրենց հայերէնի համապատասխան գիրով. օրինակ՝ Platon—Պլատոն, Paul—Պաւղոս (Պողոս):

2. — Տառադարձութեան նոր կանոն, որ կը փորձէ օտար բառերը զրեւ իրենց հնչւած ձևով. օրինակ. Paul — ֆօլ, Peter — ֆիթր:

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

| | | | |
|------------|-----------|----------|-----------|
| a — ա | h — հ | o — ո | v — վ |
| b — բ | i — ի (յ) | p — պ | x — ք |
| c — կ | j — յ | q — զ, զ | y — էւ, է |
| d — դ | k — կ | r — ը, ռ | z — չ |
| e — ե եւ է | l — լ, լ | s — ս | ch — ժ |
| f — ֆ, փ | m — մ | t — տ | ph — փ |
| g — գ | n — ն | u — ս | th — թ |

Հին տառադարձութեամբ ընդունուած ձեւերը տնայն են հայերէնին եւ այդ ձևով ալ կը գործածուին:

Նոր տառադարձութեան մէջ հայերէնի ուղղագրութեան հիմնական կանոնները պէտք է որ պահուին: Բառերուն վերջաւորութեան երբ օ-ի ձայն կայ, զրեւ ոյ. օրինակ՝ Հիւկոյ: Օտար բառերու աւ հնչիւնը հայերէնի մէջ օ-ով տուլ. օրինակ՝ Լօզան (Lausanne). Երբ ը եւ ն ձայնները իրարու կից հնչուին, զրեւ ռն. օրինակ՝ Լոֆառոնյ:

Սխալ է այն տեսակէտը որ օտար յատուկ անունները կարելի է ըստ կամս զրեւ: Ընդհակառակը զանոնք պէտք է յորժարցնել հայերէնի ուղղագրական հիմնական կանոններուն՝ որպէսզի կարելի ըլլայ սխալագրութեան անիշխման թենէն փրկուիլ:

Լեզուի մասցամը դժուար գործ է: Հայերէնի մասցիչը մասնաւոր ճիգ պէտք է քափե անխալ խօսելու եւ գրելու համար: Հայերէնի հանդէպ պէտք է բժայնդիլ ըլլայ. որպէսզի այդ կեցումժը վոխանցէ աշակերտութեան եւ մղէ յարգելու հայ լեզուն: Հայ լեզուն յարգելու միակ մամբան. զայն ուղիղ խօսելուն եւ գրելուն մէջ կը կայանայ:

Կարելի է լեզուական եւ ուղղագրական հարցերու մէջ անխալական մարդ գտնել, բայց կարելի է՝ նուազ սխալ գործածող անհատներ գտնել: Մեր ուղեցոյցին նպատակն է սխալներու նուագեցումը, եթէ ոչ ամբողջովին չհացումը:

Այս ուղեցոյցին որոշ մասերը կրնան բարդ քալիլ: Ուսուցիչը, ըստ իր հայեցողութեան, պիտի ընտրէ անհրաժեշտ ու դիրահասկնալի մասերը, եւ զանոնք դասուանդէ. միւսները վերապահելով աւելի ուշ շրջանի մը:

Կանոններուն կցումժ են հրահանգներ: Աւելորդ սեպած ենք ուղղագրելու համար հատուածներ տալ: Ուսուցիչը կրնայ որեւէ հատուած գրել տալ եւ ուղղագրական կանոններուն վերաբերեալ հարցումներ ուղղել:

**

Ուղղագրական այս ուղեցոյցին պատրաստուրեան աւտեն, նկատի առած ենք.

1. — Հետեւեալ հեղինակներուն ուղղագրական գործելը — Արարատ Ղարիբեան եւ Գ. Պարիս, Հայր Վալդան Հացունի, Հայր Արսէն Ղազիկեան, Հ. Ս. Եղիայեան, Արտաշէս Արեղեան, Բենիամին Թաշեան, Յակոբ Թորոսեան, Ս. Գ. Արրահամեան — Բ. Յ. Վերդեան — Վ. Ա. Բոսեսան, Լ. Գարագաշեան:

2. — Ուղղագրական դասագիրք անունին տակ մանչցումժ հրատարակութիւններ:

3. — Հայ մամուլին մէջ լոյս տեսած եւ մեզի մատչելի լեզուական եւ ուղղագրական ճիշտութիւն շօշուածներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

էջ

3

Ա. Մ Ա Ս

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|-------------------|----|
| Ա. — Ա | 7 |
| Բ. — Ե | 9 |
| Գ. — Է | 11 |
| Դ. — Ը | 14 |
| Ե. — Ո Լ Ը Թ | 16 |
| Նախադաս մասնիկներ | 20 |

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|------------------------------------|----|
| Զ. — Բ Լ Լ Փ | 21 |
| Է. — Գ Լ Լ Ք | 22 |
| Ը. — Դ Լ Լ Թ | 25 |
| Թ. — Խ Լ Լ Ղ | 26 |
| Ժ. — Զ Լ Լ Յ | 27 |
| ԺԱ. — Հ Լ Լ Յ | 28 |
| ԺԲ. — Զ Լ Լ Զ | 30 |
| ԺԳ. — Ռ Լ Լ Ր | 31 |
| ԺԴ. — Վ, Ո, ՈՒ, Ի | 33 |
| ԺԵ. — Նմանաձայն բառեր | 38 |
| ԺԶ. — Երկու ձևով ուղղագրուող բառեր | 45 |

Բ. Մ Ա Ս

էջ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ

| | |
|-----------------------------------|----|
| Ա. ԳԼՈՒԽ. — Գլխագիրի գործածութիւն | 47 |
| Բ. ԳԼՈՒԽ. — Կետադրութիւն | 52 |
| Տրոհութեան նշաններ | 53 |
| Առգանութեան նշաններ | 59 |
| Բացայայտութեան նշաններ | 62 |
| Գ. ԳԼՈՒԽ. — Տողադարձ | 66 |

Գ. Մ Ա Ս

ՁԱՅՆԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ

| | |
|---------------------------------|----|
| Ընդհանուր ծանօթութիւններ | 69 |
| Ա. — Է ձայնաւոր | 72 |
| Բ. — Ի ձայնաւոր | 74 |
| Գ. — ՈՒ բաղադրեալ ձայնաւոր | 76 |
| Դ. — ԻՒ բաղադրեալ ձայնաւոր | 78 |
| Ե. — ԱՅ երկբարբառ | 79 |
| Զ. — ԵԱ — ԵԱՅ երկբարբառներ | 79 |
| Է. — ՈՅ երկբարբառ | 80 |
| Ը. — Պարագայական ձայնափոխութիւն | 82 |

Դ. Մ Ա Ս

| | |
|-----------------------------------|--------|
| ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ | 84-109 |
| ՅԱԻԵԼՈՒԱՉ | 110 |
| ՎԵՐՁԱԲԱՆ | 113 |